

**2017-2020թթ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՅՄԱՆ ԶԵՆՔԻ  
ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ  
ՌԻՍԿԵՐԻ ԱՋԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Սույն փաստաթուղթը կազմվել է «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի կողմից մշակված մեթոդաբանությամբ և հաստատվել հանձնաժողովի 2021թ. հոկտեմբերի 18-ին կայացած 36-րդ նիստում:

**ԵՐԵՎԱՆ, 2021Թ.**

## ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

1. ԶՈՁ ՏՖ սպառնալիքների վերլուծության հիմնական եզրահանգումները հետևյալն են.
  - 1) Հայաստանը վերահսկվող կամ ռազմական նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների խոշոր արտադրող երկիր չէ.
  - 2) Երկակի նշանակության ապրանքների ներկրման և արտահանման համար սահմանված է լիցենզավորման խիստ ռեժիմ և սահմանային հսկողություն.
  - 3) Դիտարկվող ժամանակահատվածում դեպի ԻԻՀ և Հյուսիսային Կորեա երկակի նշանակության ապրանքների արտահանման թույլտվություններ չեն տրամադրվել.
  - 4) Դիտարկվող ժամանակահատվածում ԶՈՁ տարածման կամ դրա ֆինանսավորման հողվածներով քրեական գործեր չեն հարուցվել, պատկան մարմինները դրանց հնարավոր դեպքերի մասին հետախուզական տվյալներ կամ այլ ազդակներ չեն ստացել.
  - 5) Հաշվետու անձանց կողմից ինչպես ԶՈՁ ՏՖ հետ կապված ցուցակված անձանց անունների/ անվանումների հետ համընկնումներ, այնպես էլ հնարավոր առնչության դեպքեր չեն հայտնաբերվել:
2. ԶՈՁ ՏՖ խոցելիությունների վերլուծության հիմնական եզրահանգումները հետևյալն են.
  - 1) ՀՀ-ն անդամակցում է ԶՈՁ ՏՖ դեմ պայքարի միջազգային պայմանագրերի և ռեժիմների լայն շրջանակի.
  - 2) ՀՀ արտաքին գործերի նախարարությունը 05. 02. 2015թ. ընդունել է 2015-2020թթ. ՄԱԿ ԱԽ 1540 բանաձևի իրագործման ազգային գործողությունների ծրագիրը.
  - 3) Հայաստանում արտահանման վերահսկման ու լիցենզավորման ենթակա նյութերի և մտավոր սեփականության ներպետական ցանկերը համընդգրկուն են և համապատասխանում են Վասենաարի համաձայնության շրջանակներում մշակվող չափանիշներին.
  - 4) 2011թ. ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել և գործում է «Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, կիրառման արգելման և դրա ոչնչացման մասին» կոնվենցիայից բխող պահանջների կատարումն ապահովելու և կանոնակարգելու նպատակով միջգերատեսչական հանձնաժողով.

- 5) Չնայած ՀՀ օրենսդրությամբ միջազգային պատժամիջոցների ոլորտում պարտադիր կատարման են ենթակա միայն ՄԱԿ ԱԽ կողմից սահմանված պատժամիջոցները, հաշվետու անձինք պատշաճ կերպով հետևում են նաև ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից սահմանված պատժամիջոցներին.
  - 6) Հյուսիսային Կորեայի հետ ՄԱԿ ԱԽ 1718 բանաձևին, ինչպես նաև ՖԱԹՖ-ի հրապարակային հայտարարություններին համապատասխան որևէ գործարք չի իրականացվել.
  - 7) ԻԻՀ հետ առնչվող անձանց ՀՀ բանկերը տրամադրում են խիստ սահմանափակ բանկային ծառայություններ, որոնց կատարումը կապված չէ արտասահմանյան թղթակից բանկերի և/կամ ԻԻՀ նկատմամբ կիրառվող սահմանափակումների հետ:
3. ԶՈՁ ՏՖ սպառնալիքները և խոցելիությունները գնահատվում են ցածր (1 միավոր): ՀՀ-ում ՓԼ/ԱՖ/ԶՈՁ ՏՖ ռիսկերի ազգային գնահատման մեթոդաբանության 30-րդ կետի համաձայն՝ ԶՈՁ ՏՖ մնացորդային ռիսկը գնահատվում է **ցածր**: